

ցընել. մինչև եր հռչակաւոր տեղագիրը՝ Գոնտէր եւ ոչ նուազ անուանի տեղակալ մը, ապա Լորտ Բիչնէր, իրենց Պաղեստինի քարտիսագրութեան մէջ, Կափարգամաղան նոյնացուցին այժմու Պէյթ-ձէմալ գիւղին, Եաֆայի եւ Երուսաղէմի ճանապարհին վրայ, գէպի հարաւ. նոյնը պնդեցին պաղեստինագէտք Լիէվէն, Հ. Բառնարաս Մէյսթէրման եւ այլք: 1891-ին սկովտացի ուխտաւոր մը, նոյն գիւղին մէջ հող մը կը գնէ բարեգործութեան նպատակաւ եւ կը նուիրէ Սալէզեանց, որ նոյն հողին վրայ կը կառուցանեն երկրագործական վարժարան եւ տիպար ազարակ մը: Ս. Ստեփանոսի նշխարաց առաջին գիւտէն 1501 տարի յետոյ է որ Պէյթ-ձէմալի երկրագործական վարժարանի տեսուչը պեղումներ կատարել կու տայ այն տան բակին մէջ, ո՛ւր քանիցս երեւան ելած էին մոզայիքի կտորներ, պատի եւ սիւներու քեկորներ, պեղումները շարունակելով՝ 1913-ին արդարեւ գետնուեցան բիւզանդական ոճով շինուած մատուռ մը, գեղակերտ մոզայիքով զարդարուած, եւ անսովոր երկու պարապ գերեզմաններ: Այս նորագիւտ տապանը կը կարծուի թէ՛ Նախասարկաւազին այն տապանն է, ուրկէ 415-ին, անոր նշխարները փոխադրուեցան Սիրոնի եկեղեցին: Գերմանիա տպագրուած փոքրիկ տետրակ մը, «Le tombeau de St. Etienne protomartyr, etc.» խորագրով, այս կարևոր գիւտի մասին կու տայ պատմական լիակատար տեղեկութիւններ:

## 2. Օսար ուղեգրաց վկայութիւնները Սիրոնի Ս. Ստեփանոս եկեղեցոյ նկատմամբ

Քանի որ Ս. Ստեփանոսի նշխարաց մէկ մասը կը մնար Սիրոնի եկեղեցոյն մէջ, կանոնական պարագայ մ'էր որ անոր վրայ քրիստոնեայք կառուցանեն վկայարան մը, մասանց փոխադրութենէն վերջը. բայց այս մատուռը, ինչպէս նաև Ս. Քաղաքի բոլոր եկեղեցիները եւ վանքերը, 614-ին, հրդեհի եւ կործանման ենթարկուեցան Պարսից արշաւանքներէն, որ երկրակալութենէն աւելի, Մօրիկ կայսեր համար վրէժխնդրական պոսթիլում մըն էր, եւ ընչաքաղցութեան ծարաւ մը Սոսրով Բ. ի զինուոր-